

իւրոյ, Եւ արդարեւ ոչ ի զերեւ ելանէր ակնկալութիւն նորաւ ։ Ակրակո՞ իրաւարար Հայրենեաց ամոքէ զսպառնալիս Թէոգոսի, Յովուէփ իրրու սոսկական ոք յածեալ աստ անդ ի նահանգս Հայաստանի ի սէր աղատութեան Հայրենի աշխարհին յարդոր ի սիրտ արկանէ ժողովրդեանն ընդդէմ զժուխումբեր բռնութեան Պարսից, Սահակ Բ. յետ մահուն կենդանակերպ կարկառէ առ ոստիկանն զաղերս իւր յօգնութիւն ազգին իւրոյ տառապելոյ:

Եւ արգ Ա՛սառածարեալ Հայրապետ, այսօր բարձրացեալ Զեր ի զահ Հայրապետական խնկելի Նախորդացոյ, իրաւամբ զասիք ընդ մեծագործու ի նոցունց զի որպէս նոքայն ըստ ժամանակին պահանջմանց նոյնպէս և Զերդ Ա՛համասութիւն արիացայք ի գործու ձեր ըստ պահանջելոյ հանգամանաց և յառաջադիմաւթեան այլ և այլ ազգացն զարգացիլոց ի Փթ. զարուս և առ ի վճարելոյ ճշտութեամբ զարպտիս ձեր առ ազգն և առ եկեղեցին հիմն արկեք ազգաշէն Ճեմարանիս, յորում ի մի խմբեալ մանկունք Հայոց ընդ հովանեաւ Հայրական խնամոց առնուն զՃաշակ գիտուտութեան որով միայն բացցին ազք ապագայիցն Հայոց յարգոց յարդիս սփառելով զլոյս գիտութեան զարթուցանել ի նոստ զիտոս նախնեացն և մանաւանդ մեծի նահատակին սրբոյն Գրիգորի որ ի չորեքտասանամեայ բազմաչարչար երկունսն իւր՝ ի խաւարէ ի լոյս ծնաւ զազդո Հայոց և ծանիցին որդիք Հայոց զայշատակ աւուրս և թէ որպէս ծնաւ ի միութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյ ի գութ ի խնամն Աստուածոյին և զարթուցուն նոր ինսրոյ վերականգնել զիտոս նաւակատեացն ուուրբ տաճարիս ըստ առաջնոցն նախահարց խմբեալ ի որբավայրս Էջմիածնի յամենայն աշխարհաց:

Ա՛համասութիւն Հայոց ահաւասիկ սանունքս խմբեալ շուրջ զգահոյիքդ սփռեմք Հայրապետիդ զերախտակարտ զգացմունս սրտից մերոց մաղթելով առ բարձրեալն յերկարել զթել կենաց բազմավաստակ հովուիդ յուրախուութիւն ազգիս և ի պայծառառութիւն Եկեղեցւոյ:

Գ. ՃԵՒԱՐԱՆՔ Զ. ԴԱՍԱՐԱՆՔ Ա. ՀԱՅԻԵՐԱ

ԿԱՐԱՊԵՏ Վ ԱՐԴԱՆԵԱՆ Ո-Յ-ՈՍՏՕՅԻ:

ԱԱ2ԽԵՐԵԹԻՑ Պ. տէր Գարբիէլեանցը զրումէ Սաշխերեթ փաքրիկ զիւզը զտնուումէ Քութայիս քաղաքի արևելեան կողմը սորա բնակիչները բաղկացած են զտնազան ազգերից որոնք տարբերուումն միմեանցից կրօնքով ։ Հրեաներն են մեծամասնութեամբ, բ. Արացիք և բ. Հայերը որոց թիւը հասնումէ ոչ աւելի քան 33 տուն։ Սոցա մայրենի լեզուի տեղ ըռնել է վրացերէնը, առ հասարակ պարապումն առեարականութեամբ, ունին մի եկեղեցի, որի հետ կաղուած են համարում իւրեանց Հայութիւնը, ունին և մի քահանայ Գասպար տէր Գարբիէլեանց, բայց ցաւալի և, որ սոբա չունին ուստի մարան, որը անշուշտ կօգնէր մայրենի լեզուն սոցա մէջ տարածելուն:

Սոցա ականջին և հասաւ մեր Վանայ սովորակ եղբարց սրտաձմիկ մոր-
մաքը, վասնորոյ և շնորհիւ վիրոյիչեալ Գասպար քահանայի յօգուտ
սովելց հանդանակեցին 150 րութիւն որին մասնակցեց և իզական սեոը,
այս գումարը Գասպար քահանային ուղարկել է Քութայիսու Աւագ
քահանայ Գառիթ Եարալեանցին աեղը հասցնելու համար . .

* *

Վ. Ա. Մ. Բ. Ա. Ա. զիւղից զպիր Գալուստ Աւագեանը գրումէ. « Ազգիս ազ-
աղքասէր Ա. Ե. Հափառ Հայրապետի շնորհիւ և Հայոց զիւղականների մէջ
երեսումէ զէպ ի լուսաւորութիւն շարժման նշան: Ահա երեք ամիս է, որ
տեղումն բացուել է ծխական զպրոց, որը ունի Ա. Ե. Հափառ Հայրապետից
հաստատուած չորս պատուարժան հոգաբարձուք, որոց շնորհիւ մէջ յա-
ռաջադիմութեանց ցոյցեր են նկատուում այս փաքր ժամանակի ընթաց-
քում. աշակերտաց թիւը հասած է 68ի, և հետզհետէ աւելանալու վե-
րայ է, Ա. Ե. Հափառ Հայրապետի օծան Փ. Տարեգարձը տօնելու համար
մոյիսի 21 ին զկնի ու պատարագի քահանայական զասը Աւսուցաց, Հո-
գաբարձուաց և ժողովրդեան խուռն բազմութեան հետ միասին ժողովե-
ցան նորակառոյց դպրոցի մէջ, ուր հայկաբանութեան ուսուցիչը կարդաց
մի գեղեցիկ ձառ, բացատրելով աւուր նշանակութիւնը, և ունկնդրաց
ուշագրութիւնը գարձնելով զէպի ներկայ Ա. Ե. Հափառ Հայրապետի ազգա-
շահ սիրագործութիւնները, ձառից յետոյ աշակերտները երգեցին ազգա-
յին երգեր, որով ժողովրդականք զուարձացած և ողեռուած ցրուեցան
իրեանց տները . .

* *

Զ. Ի. Թ. Ի. Հ. Ա. Ն. Ք. Ռ. Ա. զիւղից Պ. Արապիսն Բայյպուրցեանը գրումէ. « Զիթի-
հանքով զիւղը բաղկանումէ եօմանասուն և վեց տանից, որոնցից յիսուն
և չորսը Հայ են, իսկ քսան և երկուսը Հայ-Կաթողիկէ, Հայք ունին մի
ծխական դպրոց երկու դաստանից և մի նախասենեակից, ունի հինգ հա-
գաբարձու Հայրապետական կոնդակաւ հաստատուած, որոնցից մինը
քահանայ է և չորսը աշխարհական անձինք:

Դպրոցը չունենալով ոչ մի եկամուտի աղբիւր՝ հասարակութիւնը
նշանակած է նուերներ և հասոյթներ յանուն զպրոցի. զօրօրինակ մկըր-
տութիւնից ստանումն քսան կուպէկ, պսակից մի բուրլի. զիւղում նստող
վաճառականից ստանումն տարենը քառասուն բուրլի. իսկ շրջագայող
մանրավաճառից օրէնը մի բուրլի կամ քիչ պակաս, ապրանքի քանակու-
թեան համաձայն, կիւրակէ օրը մարմնաւոր աշխատութեամբ պարապողներից
տուգանքներ՝ արած գործին համեմատ. և այս բոլոր իրաւունքները ստորա-
գրութեամբ և վաւերացուցմամբ մարմնաւոր իշխանութեան՝ յանձնած են
հոգաբարձուներին, որոնք ամենաարիութեամբ կիութան արգիւնաւորելու
այս փոքրիկ եկամուտները և դպրոցի պալազան աւելի բարւոքելու և ապա-
հովելու համար, նաև բաւականաչափ ցորեան սերմանել են տուած յօգուտ
դպրոցի. աշակերտներից ստանումն մի ուսումնական շրջանում հինգ բուր-

և ըստ կամաց Վեհափի։ Հայրապետին կատարելով իւրեանց ստանձնած նուիրական պարտքերը անձնագոհութեամբ, պիտի արժանանան վայելել Հայրապետական սուրբ օրհնութիւնը։ Փափագելի՛կը եթէ մը միւս զիւղորէից հոգարարձուներն եւս սրացից օրինակ առնելով կատարէին, ինչ որ պարտաւոր էին. և ոչ թէ լոկ հոգութեամբ անոն կրելով միայն բաւականանային։

Դպրոցում կուսանին երեսուն և վեց աշակերտք, բաժանուած երկու դասատան մէջ։

Աւսանելի առարկաներն են ։ Կրօնագիտութիւն, բ. Հայոց լեզու, ք. Մուսաց լեզու, դ. Ազգ. պատմութիւն, է. Թուարանութիւն, և սկզբունք Աշխարհագրութեան, է. Հայկական Զայնագրութիւն, ը. Առյելքագրութիւն Հայոց և Մուսաց, բ. Ազգային երգեր։

Հրամագրական շնորհակալութիւն կյայտնեմք Մանդակունի Գրիգոր քահանային որ իւր «Խորհրդածութիւն գոկաօր Նելսն Ամերիկացու և Յաւելու ածներ» անուանեալ աշխատասիրութիւնից նուիրեց Մայր Ամսողյու Գեորգեան Ճեմարանի մատենադարանին 5 օրինակ։ Փառանդաւորաց Աւսումնարանին 3. օրինակ. և Եջմիածնի մատենադարանին 2 օրինակ։

* *

Կողայսք քաղաքի հայ հասարակութիւնը իւր ի սրտէ շնորհակալութիւնը մատուցանումէ հին Խրիմու քաղաքացի Պ. Խաչոտուր Գարրիկ-Լեան Տիկիճեանցին, որ ի յիշատակ վաղամեռիկամուսոյ իւրոյ Հոփիսիմի Ներսիսեան նուիրեց իւրեանց եկեղեցուն մի հատ զիազակեայ պատմական շուրջու, մի հատ քորուր, մի զոյգ Ռևնաց, և ուսան և հինչ բուբն զրամ յօգուտ նոյն եկեղեցւոյ, նոյն հասարակութիւնը հրապարակական շնորհակալութիւն է մատուցանում քոյլ վերոյիշեալ Պ. Խաչոտուր Տիկիճեանցի՝ գերազնուուչի տիկին Գայիսնէի, որ իւր եկեղեցասիրութիւնից ստիպեալ իւր սեպհականութիւնից նուիրելով նոյն եկեղեց, ոյն ուսան և հինչ բուբն զրամ, Ներկել առե եց մեշտեայ ծածկոյթը, որի անհրաժեշտութիւնը շատ զգալի էր։

* *

Հրապարական շնորհակալութիւն կմատուցանեմք Կողայսք քաղաքացի մէծապատիւ Աւետիք Աղայի Խեպնիկեանց, որ բարեպաշտական զգացմունքից շարժուած նոյն քաղաքի Ս. Աստուածածնի վերափոխման Եկեղեցւոյն նուիրել է իւր սեպհականութիւնից Երիս հունի բուբն զրամ պատմաւութիւնը մի մեծ զանգակ։

* *

Հրապարական շնորհակալութիւն կմատուցանեմք Գեօրգենսկ քաղաքացի Պ. Անտոն Մելքոնեան Թամբեանցին, որ իւր խոստման համեմատ նուիրեց յօգուտ Մ. Աթոռոյս ի զին մի ձիոյ 50 ը. ի հաշիւ անցեալ 1880

թուականի, որպիսի նուէրը շարունակում է և շարունակելու է և այսու-
չետև տարեկ ցատրի:

* *

Հրագարակական շնորհակալութիւն Պ. Յովսէփ Էզմիրեանցին, որ նուի-
բեց Մայր Ամստեդմանի մատենագարանին հետեւալ գրեան ըը. —
Հաւաքումն հին և նոր հայ պատմագրաց Վ. իկոնօր Լոնգլուայ. 2 հա-
տոր. — Հաւաքումն Հայ պատմագրաց Բրոսսէփ. 2 հատոր. — Մատե-
նագրութիւնք Խորենաց ոյ տպեալ ի Վ. ենեսիկ ի 1843 ամի փառակաղմ
մի հատ. — Փաւառութիւնք Բիւզանցաց. ոյ պատմութիւն Հայոց առկեալ ի
Վ. ենեսիկ 1832 ամի մի հատ. — Ուռասերէն թարգմանութիւն Ըարա-
կանի. Էմինի մի հատ. — Պատմա թիւն Խորենաց ոյ տպեալ ի Տփիսիս
ի 1881 ամի 2 հատ:

* *

Խորին Վ. ենափառութիւն Ազգիս Հայրապետը բարեհաջաց արձակել
նուիս ոյ փոխանորդական պաշտօնից բարեշ. Տէր Յակովեան Գրիգորիս
վարդապետին:

* *

Խմբագրութիւնս մեծաւ շնորհակալութեամբ ստացաւ Ակադիք ոյ. Կար-
րապետ Օհանջանեանցից իւր պատրաստած վիմատիպ. Տեսարանք մեաց-
ուածոց տանն Շիրակայ., որոց վերայ արդարե փայլում մէ ոյ. Ակադիք իւր
արուեստի մէջ ունեցած հմտութիւնը. Ցանկալի էր որ այս և սորա
նման պատկերները ամեն մի Հայի տան զիսաւոր զարգարանքը կազմին:
Գնահատելի է արդարե ոյ Օհանջանեանցի աշխատութիւնը, որ ջանք է
անում մեր նախնեաց ճարտարապետական արուեստի մէջ ունեցած ճաշակի
չափն ու աստիճանը ի ահս աշխարհի հանել:

* *

Խմբագրութիւնս մեծաւ շնորհակալութեամբ ստացաւ ոյ. Արկողայոս
Ալիխանեանցից իւր աշխատասիրած. Երուանդ երկրորդ ողբերգութիւն,
հինգ արարուածով. Տպագրուած է ի Տփիսիս. Տիպը և թուղթը բաւա-
կան մաքուր են. ախսու որ բառերի մէջ տպագրական սխալներ շատ սպրուծ
են, ոյ. Հեղինեակի ասութեան համեմատ սրբագրուոյի անուշաղը թիւն
պատճառաւ: Գիշը բաւական թանգ է (2 բուրլի): Բովանդակութեան և
միւս արժանաւորութեանց մասին կխօսնենք կարգալուց յետոյ:

* *

Խմբագրութիւնս մեծաւ շնորհակալութեամբ ստացաւ ոյ. Տ. Յազար-
եանցից իւր Պողոսինի ուսուցչի օրագրից. և. Երկու մանրապէտ. Հրատա-
րակութիւնները իւրաքանչիրից երկու երկու օրինակն որոնցից մի օրի-
նակը ընծայել է Մայր Ամստեդմանի Պ. Ճեմարանի մատենագարանին. Տպուած
են ի Ծուշի. տպագրութիւնը և թուղթը զեղեցիկ են և զերը չափաւոր:
Ելու զրգութեանը թէ իւրեանց բարցապատռում բովանդակութեամբ և թէ
կոկիկ շարագրութեամբն արժանի են մանեկական զբարանին զորդ լինելու:

Հետեւեալ գեղեցիկ եւ սրտառուց յտփածոյ գրուածքը, որի
մէջ արտափայլում է ժամանակի ողին, հեղինակութիւն է Կ.
Պօլսոյ Երջանկայիշատակ ուսումնական նալեան Յակովը Պատ-
րիարքի, որ գտնուեցաւ հանգուցեալ Ալթնջեան Եփրեմ վար-
դապետի թղթոց մէջ: (բնիկ Աւլահպուղտանցի, որ երկար տա-
րիներ Ա. Պետերբուրգի Հայոց Հոգ. Կառավարութեան նախան-
դամ էր): Սորա հետ միասին կան Փեշտմաննեան ուսումնական
պատուելի Գրիգոր վարժապետի շատ մի ընտիր ոտանաւորներ
եւ ընտրելագոյն նամակներ, որք գեռեւս լոյս տեսած չեն, եւս
քանի մի կարեւոր գրութիւններ, որք հետզհետէ ի լոյս կրն-
ծայուին Արարատի միջոցաւ:

Ոտանաւոր գեղեցիկ եւ յոյժ ազգու, չարավրեալ ի Նալեան Յակոր վարդապետ՝
եւ ի խոր ծերունի պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ՝ ի վերջին ժամանակս կենաց
իւրաց մերձ ի մահն:

Մենացիր անձն իմ խղճալի, ի բարութեանց լիալ ի բաց
յումմէ յուսաս զբարութիւն, բարեպաշտոն չի մնաց:
Աղքատն է վէս, ծերն շամբուշ, իսկ մեծատունն ժլատ:
զիարդ սպասես խորհուրդ առնուլ, խորհրդական չի մնաց:
Անձն իւր անձին ստածու, անձին խոզք ամենայն այր,
յումմեքէ զոք օգնական՝ ձեռնտու նպաստ չի մնաց:
Համայնից ջանն ի ներկայիս, վայելլասցի վայելմամբ,
իսկ վասն աւուրց հանգերձելոյն, հոգածու այր չի մնաց:
Ամ ի վաշտու, ռմն ի գնել, կամք չեն ածել հեշտութեամբ,
յարքայութեան կոչն հարսանեաց՝ գնացող այր չի մնաց:
Համայն վաճառք խարգախանածք, չափ մեծ և փոքր թիւրեալք,
մինչ ի կշիռս և ի կշոռըս, արդարութիւն չի մնաց:
Աւաճառականք ճիրանաւորք, ի դաւելոյն գիւտ ածեալք,
ի վաճառս գինարանաց, անջուր զինի չի մնաց:
Եսպառ բարձրեալ են իրաւունք, ընդ նոցին սուտ տարածեալք,
առ մեծամեծու և առ ստրուկս ճշմարտութիւն չի մնաց:
Ամենայն ոք ջանայ պատրել սոսկական փասս ունելով,
ուստի ի սիրտս և ի լեզուս, ստու գութիւն չի մնաց:
Եղբայր եղբօր դժկամակի, իրը ընդ օտարս ունելով,
ընկեր զընկեր ջանայ զրկել, սէր ընկերի չի մնաց:
Մեծամեծաց զանանկս կեղեքել, փառունց զմեծամեծս ըմկահակել,
մինըն անգութ, մինն անշլու, շահածութիւն չի մնաց:
Համազամփէք փարթամ եղեալ, ուտել ըմկել ի խրախճանս,
իսկ կարօտեալ Պաղարոսի, փշրանք հացի չի մնաց: